ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

20 սեպտեմբերի 2024թ. **N 8-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 138-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սահմանել, որ.

1) Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքում 2024 թվականի հոկտեմբերի 20-ին կայանալիք մեծամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ղեկավարի ընտրությունում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և քարտուղարի պաշտոններն Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցության, կուսակցությունների դաշինքների միջև բաշխվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 138-Ն որոշման 4-րդ հավելվածով հաստատված՝ «Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների ըստ ընտրական տեղամասերի բաշխման կարգի» 6-րդ կետով սահմանված կարգով,

2) տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և քարտուղարի պաշտոններն ըստ ընտրական տեղամասի, «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցության, կուսակցությունների դաշինքների միջև համապատասխանաբար բաշխվել են՝

Մարզ	Համայնք	ՏԸՀ	Հանձնաժողովի նախագահ	Հանձնաժողովի քարտուղար
Արմավիր	ֆերիկ	15/1	ՔՊԿ	ՀԱՅԱՍՏԱՆ

2. Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են 2024 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 25-ը՝ մինչև ժամը 18.00-ն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. Հովակիմյան**